գէտները բաղմիցս ուսումնասիրել և նկարագրել են այդ խոյակները.* Նոքա կողովաձև կերտուած ունին և քանդակները շատ նուրբ են. իւրաքանչիւր երկուսի վերայ կան միևնոյն յունարէն տառերը խաչաձև քանդակած Ներսէս Գ. Շինողի անունով այսպէս.

ΝΑΡΣΟΥ Ներսիսի ΚΑΘΟΛΙΚΟΥ կաթողիկոսի.

Եթէ հետևինք Դրասխանակերտցու վկայութեանը, պիտի մտածենք, որ այս խոյակներին համապատասխան խարիսխների տակ, որոնք դեռ մնում են փլատակի ներքև, պահուած են ս. Լուսաւորչի նշխարներից չորս մաս. Իսկ թէ ինչ եղաւ նորա պատուական գլուխը, որ պահուում էր գանձերի մէջ, չենք կարող պատմութիւնից որոշ բան իմանալ. Կաղանկատուացին և Վարդան աւանդում են, որ Է. դարում Աղուանից Իսրայէլ եպիսկոպոսը շատ աղաչեց Գրիգոր պատրիկին և Ներսէս Գ. կա-

* Strzyg das Etschm. Evangelium —911.